

Արտահանում-ներմուծում

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ թարմ պտուղ-բանջարեղենի տեղափոխումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) թարմ պտուղ-բանջարեղենի արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված տրված բուսասանիտարական հավաստագրի (արտահանող երկրի պահանջի դեպքում նաև պահանջվող այլ փաստաթղթերի) առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ սերմերի և տնկիների տեղափոխումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) սերմերի և տնկիների արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի (արտահանող երկրի պահանջի դեպքում նաև պահանջվող այլ փաստաթղթերի) առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ չոր մրգերի տեղափոխումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) չոր մրգերի արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի (արտահանող երկրի պահանջի դեպքում նաև պահանջվող այլ փաստաթղթերի) առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ կենդանի կենդանիների (բացառությամբ 2 գլխից ոչ ավելի քանակով՝ անձնական օգտագործման համար անդամ պետությունների միջև կենդանիների տեղափոխումը) տեղափոխումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և բեռը տեղափոխող հայկական ընկերության Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի ՀՀ-ի ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) կենդանի կենդանիների արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի (արտահանող երկրի պահանջի դեպքում նաև պահանջվող այլ փաստաթղթերի) առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ միս-մսամթերքի, կաթ-կաթնամթերքի, ձուկ-ձկնամթերքի տեղափոխումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և բեռը տեղափոխող հայկական ընկերության Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի ՀՀ-ի ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) միս-մսամթերքի, կաթ-կաթնամթերքի, ձուկ-ձկնամթերքի արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի (արտահանող երկրի պահանջի դեպքում նաև պահանջվող այլ փաստաթղթերի) առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ կենդանիների կերի տեղափոխումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և բեռը տեղափոխող հայկական ընկերության Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի ՀՀ-ի ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից Երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) կենդանիների կերի արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի (արտահանող երկրի պահանջի դեպքում նաև պահանջվող այլ փաստաթղթերի) առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ անասնաբուժական դեղամիջոցների տեղափոխումը:

Պետական գրանցման վկայականի առկայության և պատրաստող ձեռնարկության կողմից տրվող՝ դրանց որակն ու անվտանգությունը հաստատող փաստաթղթի դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից Երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) անասնաբուժական դեղամիջոցների արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի (արտահանող երկրի պահանջի դեպքում նաև պահանջվող այլ փաստաթղթերի) առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ հրուշակեղենի, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, մրգային և բանջարեղենային պահածոների տեղափոխումը:

Համապատասխանության հայտարարագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) հրուշակեղենի, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, մրգային և բանջարեղենային պահածոների արտահանումը:

Տվյալ երկրի պահանջի դեպքում ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անվտանգության սերտիֆիկատի և բեռի անվտանգությունը հավաստող այլ փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ չպարունակող մանկական սննդի տեղափոխումը:

Պետական գրանցման վկայականի և անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ չպարունակող մանկական սննդի արտահանումը:

Տվյալ երկրի պահանջի դեպքում ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անվտանգության սերտիֆիկատի և բեռի որակն ու անվտանգությունը հավաստող այլ փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ պարունակող մանկական սննդի տեղափոխումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի, պետական գրանցման վկայականի և բեռը տեղափոխող հայկական ընկերության Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի ՀՀ-ի ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ պարունակող մանկական սննդի արտահանումը:

ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և տվյալ երկրի պահանջի դեպքում բեռի որակն ու անվտանգությունը հավաստող այլ փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից ՌԴ և ԵԱՏՄ անդամ այլ երկրներ կենսաբանական ակտիվ հավելումների տեղափոխումը:

Պետական գրանցման վկայականի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ՀՀ-ից երրորդ երկրներ (ոչ ԵԱՏՄ անդամ երկրներ) կենսաբանական ակտիվ հավելումների արտահանումը:

Տվյալ երկրի պահանջի դեպքում ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված անվտանգության սերտիֆիկատի և բեռի որակն ու անվտանգությունը հավաստող այլ փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ թարմ պտուղ-բանջարեղենի տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ թարմ պտուղ-բանջարեղենի ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ ցորենի, գարու, վարսակի, եգիպտացորենի, բրնձի, այլուրի տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ ցորենի, գարու, վարսակի, եգիպտացորենի, բրնձի, այլուրի ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ սերմերի և տնկիների տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ սերմերի և տնկիների ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ չոր մրգերի տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ չոր մրգերի ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ չբոված սուրճի տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ չբոված սուրճի ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ կենդանի կենդանիների (բացառությամբ 2 գլխից ոչ ավելի քանակով՝ անձնական օգտագործման համար անդամ պետությունների միջև կենդանիների տեղափոխումը) տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի տվյալ պետության ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ կենդանի կենդանիների (բացառությամբ ոչ ավելի, քան երկու գլուխ շների և կատուների համար, որոնք տեղափոխվում են անձնական օգտագործման նպատակով) ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և ՀՀ ՍԱՏՄ ներմուծման թույլտվության առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ միս-մսամթերքի, կաթ-կաթնամթերքի, ձուկ-ձկնամթերքի տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի տվյալ պետության ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ միս-մսամթերքի, կաթ-կաթնամթերքի, ձուկ-ձկնամթերքի ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և ՀՀ ՍԱՏՄ ներմուծման թույլտվության առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ կենդանիների կերի այն տեսակների, որոնք իրենց բաղադրության մեջ պարունակում են կենդանական ծագման բաղադրիչներ տեղափոխումը:

ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի տվյալ պետության ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ կենդանիների կերի այն տեսակների, որոնք իրենց բաղադրության մեջ պարունակում են կենդանական ծագման բաղադրիչներ ներմուծումը:

Արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և ՀՀ ՍԱՏՄ ներմուծման թույլտվության առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ անասնաբուժական դեղամիջոցների տեղափոխումը:

Պետական գրանցման վկայականի և պատրաստող ձեռնարկության կողմից տրվող՝ դրանց որակն ու անվտանգությունը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ անասնաբուժական դեղամիջոցների ներմուծումը:

Պետական գրանցման վկայականի և պատրաստող ձեռնարկության կողմից տրվող՝ դրանց որակն ու անվտանգությունը հաստատող փաստաթղթի, ՀՀ ՍԱՏՄ ներմուծման թույլտվության առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ հրուշակեղենի, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, մրգային և բանջարեղենային պահածոների տեղափոխումը:

Համապատասխանության հայտարարագրի առկայության և անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ հրուշակեղենի, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, մրգային և բանջարեղենային պահածոների ներմուծումը:

Համապատասխանության հայտարարագրի և անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ չպարունակող մանկական սննդի տեղափոխումը:

Պետական գրանցման վկայականի և անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ չպարունակող մանկական սննդի ներմուծումը:

Պետական գրանցման վկայականի և անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ պարունակող մանկական սննդի տեղափոխումը:

Պետական գրանցման վկայականի, ԵԱՏՄ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրի տվյալ պետության ցանկում առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ իր բաղադրության մեջ կենդանական ծագման բաղադրիչներ պարունակող մանկական սննդի ներմուծումը:

Պետական գրանցման վկայականի, արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի և ՀՀ ՍԱՏՄ ներմուծման թույլտվության առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ կենսաբանական ակտիվ հավելումների տեղափոխումը:

Պետական գրանցման վկայականի և անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Ո՞ր փաստաթղթերի և պահանջների առկայության դեպքում է իրականացվում երրորդ երկրներից ՀՀ կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծումը:

Պետական գրանցման վկայականի և անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի առկայության դեպքում:

✓ Առանց ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված ներմուծման թույլտվության և արտահանող երկրի լիազոր մարմնի անասնաբուժական սերտիֆիկատի որքա՞ն անասնաբուժական հսկման բեռ կարելի է ներմուծել ՀՀ:

Առանց ՀՀ ՍԱՏՄ կողմից տրված ներմուծման թույլտվության և արտահանող երկրի լիազոր մարմնի անասնաբուժական սերտիֆիկատի թույլատրվում է ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ձեռքի ծանրոցում, ուղեբեռում եւ փոստային առաքումներում մինչեւ 5 կիլոգրամը ներառյալ՝ գործարանային փաթեթավորմամբ կենդանական ծագման պատրաստի արտադրանքի ներմուծումը՝ նշված ապրանքն արտադրող երկրի եւ արտահանման երկրի անասնահամաճարակային տեսանկյունից բարեկեցության պայմանով:

✓ Առանց արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրի որքա՞ն բարձր ռիսկայնության բուսասանիտարական հսկման բեռ կարելի է ներմուծել ՀՀ:

Առանց արտահանող երկրի լիազոր մարմնի կողմից տրված հավաստագրի թույլատրվում է հինգ կիլոգրամից ոչ ավելի ընդհանուր քաշով կարանտինի ենթակա բարձր բուսասանիտարական ռիսկ ներկայացնող արտադրանքի (բացառությամբ սերմնանյութը և տնկանյութը՝ ներառյալ սերմացու և պարենային կարտոֆիլն ու սելեկցիոն և գիտահետազոտական նպատակների համար նյութը), ինպես նաև 1 հատից ոչ ավելի քանակությամբ սեխերի, ձմերուկների և դդումների, 3 փնջից ոչ ավելի քանակությամբ ծաղիկների՝ Միության մաքսային սահմանով միջազգային փոստային առաքիներով, էքսպրես բեռներով, նավերի, ինքնաթիռների, ուղևորատար վագոնների, ավտոտրանսպորտային միջոցների ուղևորների, նավերի, ինքնաթիռների անձնակազմի անդամների, գնացքը սպասարկող անձնակազմի և ավտոտրանսպորտային միջոցների վարորդների կողմից ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով ներմուծումը:

✓ Որքա՞ն է գանձվում ՀՀ ներմուծվող սննդամթերքի և կենդանական ծագման մթերքի զննման և ուղեկցող փաստաթղթերի համապատասխանության որոշման համար:

Ներմուծվող սննդամթերքի և կենդանական ծագման մթերքի զննման և ուղեկցող փաստաթղթերի համապատասխանության որոշման համար գանձվում է

վճար՝

- 1) 500-1000 կգ քաշի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով (1000 դրամ),
- 2) 1 տոննան գերազանցող քաշի դեպքում՝ լրացուցիչ յուրաքանչյուր տոննայի համար ևս 300 դրամի չափով,
- 3) մինչև 500 կգ քաշի համար վճար չի գանձվում:

✓ **Որքա՞ն է կազմում ՀՀ ՍԱՏՄ-ի կողմից տրամադրվող սերտիֆիկատների արժեքը:**

ՀՀ ՍԱՏՄ-ն ներմուծման, արտահանման, ՀՀ-ից ԵԱՏՄ անդամ երկրներ բեռների տեղափոխման ժամանակ բոլոր սերտիֆիկատները տրամադրում է անվճար:

✓ **Պետական սահմանի անցման կետերում ո՞ր մարմինն է իրականացնում սահմանային պետական վերահսկողությունը:**

Սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում իրականացնում են մաքսային մարմինները:

✓ **Ի՞նչ է իրենից ներկայացնում պետական սահմանի անցման կետերում սահմանային պետական վերահսկողությունը:**

Սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում դա մաքսային մարմինների կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող և արտահանվող (վերաարտահանվող) սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանությունը պարզելուն ուղղված միջոցառումների համալիր է:

✓ **Ի՞նչ կարգով է իրականացվում սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում:**

Սահմանային պետական վերահսկողությունը պետական սահմանի անցման կետերում մաքսային մարմինների կողմից իրականացվում է բացառապես փաստաթղթային ուսումնասիրության, փաստաթղթային ստուգման, ակնադիտական զննման կամ ակնադիտական հետազոտման (բեռների նույնականացման) միջոցով: